## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 11-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 03-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ՝ | Պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին բնապահպանության նախարարության և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով՝ նախկինում մաքրված տարածքների հետ, 2018 թվականի նոյեմբերի 1-ից լուծվել է հիշյալ պայմանագիրը: |
| Փոփոխության նկարագրություն՝ | Պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին բնապահպանության նախարարության և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով՝ նախկինում մաքրված տարածքների հետ, 2018 թվականի նոյեմբերի 1-ից լուծվել է հիշյալ պայմանագիրը:<br>Պայմանավորված վերոնշյալով՝ դադարել է գոյություն ունենալ Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով 2018 թվականի մայիսի 11 -ին բնապահպանության նախարարության և «ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) գնման պահանջը: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով և Պայմանագրի 7.8 կետով՝ փոխադարձ համաձայնությամբ լուծվել է Պայմանագիրը: |
| Փոփոխության հիմնավորում՝ | ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետ, պայմանագրի 7.8 կետ: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Ջոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **բնապահպանության նախարարություն:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
(374 11) 818 506

№ 5/06.2/52229-18
«01» «11» 2018 թ.

«ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական
հսկողություն» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ս.Հայրապետյանին
ք.Երևան, Ջավարյան փող. 1ա շենք, բն 54

Հարգելի պարոն Հայրապետյան

Պայմանավորված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների 2018-2022 թվականներին մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ բնապահպանության նախարարության սկզբունքների և մոտեցումների վերանայմամբ՝ ծովի մակերևույթից 1901.5 մետր նիշից ներքև ջրածածկ տարածքների մաքրման առաջնահերթությամբ, ինչպես նաև այդ նպատակով 2018 թվականի հուլիսի 10-ին բնապահպանության նախարարության և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԲՄ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրի պայմանագրով նախատեսված որոշ տարածքների քարտեզագրական նյութերի ավելի քան 20 տոկոսով համընկնումներով՝ նախկինում մաքրված տարածքների հետ, 2018 թվականի նոյեմբերի 1-ից լուծվել է հիշյալ պայմանագիրը:

Պայմանավորված վերոնշյալով՝ դադարել է գոյություն ունենալ Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով 2018 թվականի մայիսի 11-ին բնապահպանության նախարարության և «ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) գնման պահանջը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով և Պայմանագրի 7.8 կետով՝ առաջարկում եմ փոխադարձ համաձայնությամբ լուծել Պայմանագիրը:

Խնդրում եմ հինգ աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Ձեր դիրքորոշումը: Կից ներկայացնում եմ Պայմանագրի լուծման համաձայնագրի նախագիծը: Համաձայնության դեպքում խնդրում եմ Ձեր կողմից հաստատված համաձայնագրի երկու օրինակ ներկայացնել բնապահպանության նախարարություն:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝
պաշտոնակատար Վ.Ջիլավյան

11/1/2018

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

Ֆինանսատնտեսական վարչության
Բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լ.Զոհրաբյան 011 818 514

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

## «11» մայիսի 2018թ. թիվ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29 պայմանագրի

ք.Երևան «03» «11» 2018թ.

Բնապահպանության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 11-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրի պայմանագրի 7.5 և 7.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2018 թվականի մայիսի 11-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/29» ծածկագրով պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծել:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Բնապահպանության նախարարություն**

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007763
ՀՎՀՀ 02507198
Բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ
**Վ.Ջիլավյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ**

ք.Երևան, Զավարյան փող. 1ա շենք, բն 54
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2478700055990000
ՀՎՀՀ 01563737
«ԳԱՍ շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն» ՍՊԸ-ի տնօրեն
**Ս.Հայրապետյան**
(ստորագրություն)
Կ.Տ.